

Որ քեպէս փոխեալ ի յիւսկիւսարին,
Այլ սորայս կոչի անուն հընարչին.
Բանայ զիւր ծաղիկ ո՛չ սոսկ զաւրնային,
Այլ զարնան յաշման զանրառամեղին: (1)

1790էն մինչև 1830՝ Թուրքահայ առեւտր. անգիր պատմութեան մէջ չենք պատահիր հայ վաճառական մեծատուների մը. նոյն միջոցներն երեւելի էին գլխաւորապէս հայ՝ մանաւանդ Ակընցի՝ սեղանաւորները, որոնց մասնական պատմութեան Ա. տպագրութիւնն հրատարակուած ալ է Վենետիկի Մխիթարեանց տպարանէն՝ Հին օրեր ու այդ օրերու մեծաւունք անունով: Այս սեղանաւորներուն մէջ, որոնց ձեռքն էին մեծ փոխատուութեանց փոխանակութեանց և դրամատուների բովանդակ գործողութիւնք, անշուշտ կային քանի մը մեծ հայ վաճառականներ ալ Կ. Պոլիսի ու գաւառներու շահաստանները, որ կը կատարէին երկիրին արտածութեանց և քիչ շատ ներածութեանց ալ վաճառականութիւնը, գլխաւորապէս թիւլպէնտի, ներկեալ ու ճերմակ կտաւներու, պամայի գործեր. բայց վաւերաբար չենք կըրնար յիշատակել անոնց անունները: Միայն Տօքթ. A. Brayer իր գիտնական երկասիրութեան մէջ՝ (2) կը յիշատակէ 1815էն 1825 քանի մը հայ միջնորդներ վաճառականութեան,

(1) Ետքերը՝ 19րդ դարի առաջին բառորդին՝ կը բացուի Եէնի-գարույի մէջ փապրիզայ եազմայի ու քիչ մըն ալ պամայի համար՝ 120 հիսէի բաժնուած. նոյնպէս կը կազմակերպի Սկիւտար Սալահաքի պասաֆախանէն ալ. Բարեյիշատակ Սուլթան Մահմուտ ալ ընտրանքով անուանած էր՝ քիչ մը ետքը՝ 12 կամ 24 հատ պէտաքըլ քիւճմար զարգացունելու համար արհեստները, որոց մին ալ էր Սեթեան Դաւիթ. Եւ ասոնց բերած զլիւսւոր վաճառքն էր Թիւլպէնտ՝ եազմայի համար:

(2) Neuf années à Constantinople et observations. par A. Brayer D. M. P. membre de plusieurs sociétés savantes. Paris MDCCCXXXVI.